ք. Երեւան 09.12.2003թ.

Հարգելի տիկնայք եւ պարոնայք,

Հայաստանի Ֆուտբոլի Ֆեդերացիան /ՀՖՖ/ խրախուսել է ֆուտբոլային ակումբների արտոնագրման համակարգի ներդրումը, սկսած 2004/2005թթ. մրցաշրջանից, ինչը արտոնագիր ստացած ակումբներին թույլ կտա մասնակցելու միջազգային մրցումներին:

ՀՖՖ արտոնագրման համակարգի ներդրման խնդիրն է.

- նպաստել ֆուտբոլի՝ որպես մարզաձեւի, զարգացմանը երկրի շրջանակներում ու Եվրոպայում ամբողջապես,
- պատանի ֆուտբոլիստների պատրաստականության համար առավելագույն բարեկեցիկ պայմանների ապահովում,
- ակումբների գործունեության ֆինանսատնտեսական ամրապնդում,
- ակումբների մարզադաշտերի արդիականացում՝ հաշվի առնելով հանդիսականների, ֆուտբոլիստների ու մրցավարների պահանջները, ինչպես նաեւ անվտանգության ապահովում:

Ակումբներին կուղարկվի չափանիշների նկարագիրը, որոնց պահպանումն իրավունք կտա մասնակցելու միջազգային մրցումներին եւ ՀՖՖ-ի մասնագետների օգնություն կտրվի անցկացնելու միջոցառումներ, որոնք կնպաստեն սահմանված պահանջների կատարմանը:

Մեր նպատակն է բոլոր ակումբների հայտերի էֆեկտիվ եւ ժամանակին քննարկման ապահովումը, ինչպես նաեւ ակումբներին հայտերի ձեւակերպման համար անհրաժեշտ տեղեկատվության տրամադրումը:

ՈՒԵՖԱ-ի նախաձեռնության զարգացման գործում նրա կազմի մեջ մտնող բոլոր 52 ֆեդերացիաները ներդնում են արտոնագրման համանման համակարգեր:

ՀՖՖ արտոնագրման համակարգը պետք է համապատասխանի ՈՒԵՖԱ-ի կողմից իր ֆուտբոլային ակումբների արտոնագրման վերաբերյալ ուղեցույցում սահմանված պահանջների նվազագույն ծավալին՝ եվրոպական մրցումներին մասնակցող բոլոր ակումբների համար միատեսակություն եւ նորմատիվների հետեւողական կիրառկում ապահովելու նպատակով:
Ակումբների գնահատման չափանիշները ստորաբաժանվում են հետեւյալ խմբերի.

- ենթակառուցվածքային,
- մարզական,
- վարչական եւ կադրային,

- իրավական,
- ֆինանսական:

Բացի այդ ՀՖՖ-ն պարտավորվում է կատարել ֆուտբոլային ակումբների արտոնագրման ազգային նորմատիվի պահանջները եւ նշված նորմատիվին իր համապատասխանության նպատակով անցնել ամենամյա վերաորակավորում, որն անցկացվում է անկախ հավաստագրային կազմակերպության ուժերով:

Մենք համոզված ենք, որ արտոնագրման համակարգն ամուր հիմքեր կդնի ֆուտբոլի շարունակական զարգացման համար՝ ի բարօրություն բոլոր շահագրգիռ անձանց:

Իրադարձությունների ընթացքի մասին մենք պետք է տեղյակ պահենք բոլոր նրանց, ովքեր առնչվում են մեր ծրագրի իրականացմանը՝ օպերատիվ խորհրդակցություններ անցկացնելու եւ տեղեկագրեր թողարկելու միջոցով, ինչպես նաեւ կապահովենք արտոնագրման գործընթացի բոլոր անմիջական մասնակիցների համակողմանի ուսուցումը, որն անհրաժեշտ է մեզ առաջադրված խնդիրների հաջող լուծման համար:

Ես ակնկալում եմ ձեր աջակցությունը այդ ծրագրի իրականացման գործում եւ պատրաստակամություն եմ հայտնում քննարկելու ձեր ցանկացած առաջարկություններն այս կապակցությամբ: